Նարեկ Սարգսյան

Տանգո արարչի հետ

Ուշ երեկո է, և ես մենակ եմ,

Փակում եմ աչքերս, տեսնում եմ քեզ:

Ժպտում ես, ու քո մեջ տեսնում եմ

Անհուն սեր, նվիրվածություն, բարություն,

Տեսնում եմ անսահման հոգատարություն

ու կարեկցանք:

Ժպտալով՝ դու կանչում ես ինձ քեզ մոտ,

Սրտի թրթիռով մոտենում եմ քեզ,

Ու միասին պարում ենք մեր

տիեզերական տանգոն:

Մեր շարժումները ներդաշնակ են

Ինչպես երկիր մոլորակի ռիթմերը,

Մեր էմոցիաները՝ կրքոտ

ինչպես սիրահար զույգերինը:

Ասա՛ ինձ, թե ո՛վ եմ իրականում ես,

Ու՞ր են ինձ տանում կյանքիս

իրադարձությունները,

Ցու՛յց տուր ինձ ճշմարիտ ճանապարհը:

Դու միշտ իմ սրտում ես եղել,

Թեև այսքան ժամանակ ես դա

չեմ նկատել:

Դու միշտ փորձել ես ինձ հուշել

աստվածայինը,

Բայց լարվածությունը, վախերն ու

սթրեսները

Խլացրել էին քո ձայնը:

Այժմ մենք միասին ենք

Ու պարում ենք մեր տիեզերական

տանգոն:

Խնդրում եմ, ցույց տուր ինձ քո հրաշքները

Տար ինձ այնտեղ,

Ուր գտնվում է մարդկության անսահման

սիրո ու բարության օվկիանոսը,

Շշնջա ականջիս, որ հրաշքները

Իմ առօրյա կյանքի անբաժանելի մասնիկն են

Որոնք ես պետք է սկսեմ նկատել:

Թող որ միանամ քո աստվածային էությանը

Թող որ մոգական այս տանգոն երբեք չավարտվի . . . .

Ու մենք պարում ենք, մենք միասին ենք

Դու իմ սրտում ես, իսկ ես՝ քո

Թող որ մեր տանգոյի երաժշտության հնչյունները

Սփռվեն աշխարհի բոլոր ծայրերում՝

Համբուրելով բոլոր մարդկանց ունկերը,

Ջերմացնելով նրանց սրտերը:

ԵՎ ես պարում եմ քո շարժումներին համընթաց,

Ու միասին ստեղծում ենք մի նոր իրականություն,

Մի նոր երկիր, մի նոր կյանք:

30.09.2017թ Մեղրի